

## ՆԱՐՆՁԱԳՈՅՆ ԳԻՐՔԸ

### Տանկա-Հայաստանի բարեփոխող քաղաքական փոփոխությունների մասին,

(Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Ар-  
меніи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года)

Երկար տարիների ընթացքում հայ ժողովրդի կրած պատ-  
մական տանջանքները Տաճիկ կառավարութեան կողմից արձանա-  
գրուել են սոսկ թղթի վրայ՝ առանց իրական միջոցներով վերջ  
դնելու այդ տանջանքներին, իսկ «Հայկական հարցի» լուծումն էլ  
ոսմանափակուել է միայն և միայն պաշտօնական գրազրութեամբ  
և կամ մամուլի մէջ արձագանք գտնելով: Ի՞նչ խօսք, որ «Հայ-  
կական հարցի» լուծումն կամ, այլ կերպ ասած, հայ ժողովրդի  
տանջանքներին վերջ տալու խնդիրը յաջող և վաղուց վերջացած  
կըլինէր, եթէ Եւրոպական պետութիւնները դրական միջոցների  
գիմէին փոխադարձ սերտ համաձայնութեամբ: Բայց նրանց մէջ  
եղած այդ իսկ անհամաձայնութիւնն է եղել, որ մինչև ներկայ  
ժամը Հայաստանում ոչ միայն մազաչափ անգամ չէ փոխուել  
իրերի դրութիւնը, այլ, աւանդ, կրկին և կրկին հազարաւոր հայ  
անմեղների արիւնով ներկոււմ են մեր հողն ու ջուրը: Այս երկինք  
ազադակող փաստն արձանագրուած է արդէն Ռուսաստանի, Ֆրանս-  
սիայի և Անգլիայի կառավարութեանց կողմից ներկայ 1915 թ.  
Մայիս 12 պաշտօնական հեռագրի մէջ:

Ռուս բարեխնամ կառավարութեան կողմից ջանքեր են եղել  
իրականացնելու Հայաստանում «բարենորոգութիւնները», բայց  
խորտակող Տաճիկ կառավարութիւնը՝ միշտ դաւադիր Գերմա-  
նիայի կողմից խրախուսուելով, արգելքներ է դրել իրականացնե-  
լու բարենորոգութիւնների խնդիրը: Եւ երբ Տաճիկ կառավարու-  
թիւնը, թելադրուած Գերմանիայից, պատերազմ հրատարակեց  
Ռուսաստանի դէմ՝ վերջինս Արտաքին Գործոց Նախարարութեան  
անունից հրատարակեց Նառնչագոյն զբի երկրորդ ժողովածուն,  
որը բովանդակում է իւր մէջ «Հայկական հարց»-ի վերաբերեալ  
բոլոր պաշտօնական գրազրութիւնները սկսած 1912 թ. Նոյեմբերի  
26-ից մինչև 1914 թ. Մայիսի 10-ը: Հայկական հարցի համար  
էական նշանակութիւն ունին այդ ժողովածուի մէջ եղած կարևոր

փաստաթղթերը՝ ուստի և հարկ համարեցինք «Արարատ»-ի ընթացողներին ծանօթացնել այդ փաստագրերին: Բոլոր փաստագրերն ընդամենայն 159 է, 7 յաւելուածով:

## 1.

Առաջինը Կ. Պօլսի Ռուսաց ղեսպան Գիրսի ընդարձակ հեռագիրն է Արտաքին Գործոց Նախարար Սազանովին՝

Ռ. ղղուած Կ. Պօլսից 26 նոյեմբերի 1912 թ.:

Դեսպանն այդ հեռագրով նորից յիշեցնում և հաստատում է՝ որ հայերի դրութիւնը, ինչ որ էր 1894 մինչև 1896 թ., երբ հայերը Փոքր Ասիայում և նոյն իսկ Կ. Պօլսում ենթարկուեցին բարբարոսական ջարդերի, ոչնչով չէ փոխուել զէպի լաւը: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ճշման ներքոյ, 1895 թ. Հոկտեմբերի 20-ին Սուլթան Աբդուլ Համիդի հրատարակած, Հայկական գաւառներում մտցնելիք բարենորոգութիւնների վճռագիրը ֆնաց մեռած տառ: Հողային հարցը իւրաքանչիւր օր աւելի սուր կերպարանք է ստանում. հողերի մեծ մասը յափշտակել և յափշտակուել է քրդերի կողմից, իսկ իշխանութիւններն ոչ միայն արգելք չեն լինում, այլ մինչև անգամ հովանաւորում և աջակցում են այդ յափշտակութիւններին, Մեր հիւպատոսները, ասում է Դեսպանը, միաբերան վկայում են՝ որ չեն ընդհատուել քրդերի աւազակութիւններն ու թալանը, հայերի կոտորածը նրանց ձեռքով, հայ կանանց բռնի կերպով իսլամական կրօնն ընդունել տալը, ըստ որում յանցաւորները ոչ մի ժամանակ չեն ենթարկուել պատասխանատուութեան: Այն Թակիրը, որ Կ. Պօլսի Հայոց Պատրիարքը ներկայացրել է Բարձրագոյն Դրան և Արդարադատութեան Նախարարին, ներկայացնում է հալածանքների և նեղութիւնների այն իսկական պատկերը, որոնց ենթարկուել են Սուլթանի հայ հպատակները»:

Ապա Դեսպանը յիշատակում է այն փաստը՝ որ ներկայումս թէ Ռուսահայերի և թէ Տաճկահայերի համակրանքը Ռուսաստանի կողմն է: Վանի, Բայազիտի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի հիւպատոսները հաւաստիացրել են Դեսպանին՝ որ ներկայումս բոլոր հայերի համակրանքը, առանց կուսակցութեանց խտրութեան, Ռուսաստանի կողմն է, ինչպէս օրինակ Վանի փոխ-հիւպատոսը 1912 թ. նոյեմբերի 21-ին հեռագրում է Դեսպանին, թէ «բոլոր հայերը ներկայումս Ռուսաստանի կողմն են, անկեղծ կերպով ցանկանում են մեր զօրքերի մուտքը կամ բարենորոգութիւններ Ռուսաստանի կոնտրոլի ներքոյ»:

«Ներկայումս ամենայն Հայոց Կաթողիկոսը Նորին Մեծու-

Թեան Կովկասի Տ. Փոխարքայի միջոցով դիմում է Ռուսաստանին, «իբրև Արևելքի քրիստոնեայ ժողովրդների վաղեմի պաշտպանին և յանուն Աստուծոյ խնդրում է Տաճկա-Հայաստանում ապրող բազմատանջ ժողովրդին իւր հովանաւորութեան տակ առնել»:

«Վերոյիշեալի հիման վրայ ես պէտք է ընդունեմ, որ Կաթողիկոսի դիմումը բոլորովին ճիշտ կերպով արտայայտում է Տաճկաց պետութեան հայ ժողովրդի տրամադրութեանը ղէպի Ռուսաստանը: Հայ ժողովրդի Հոգեոր Պետի պաշտօնապէս յարուցած հարցը Ռուսաստանի համար ներկայանում է պետական առաջնակարգ կարևորութիւն ունեցող հարց, որ պահանջում է բազմակողմանի վերամշակումն, որին և ես մտադիր եմ անցնել մօտիկ ապագայում, երբ կըստացուին այն տեղեկութիւնները, որ պահանջել եմ Պատրիարքարանից և մեր Հիւպատոսներէց»:

Ապա Դեսպանը յայտնում է կարծիք, որ անհրաժեշտ է հաւաստիացնել թէ Կաթողիկոսին և թէ Կ. Պօլսի Պատրիարքին, որ Ռուսաց Կայսերական Կառավարութիւնը յարգելով հայերի խնդիրը՝ հնարաւոր հովանաւորութիւն ցոյց կը տայ, հարկը պահանջած ղէպքում: Եթէ այգպիսի խոստումն լինի, որ և է նոր կոտորած պատահած ղէպքում հայերը յետ կը մնան անյապաղ Պետութիւններին դիմելուց:

Թէ ինչ ձևով պէտք է լինի Ռուսաստանի հովանաւորութիւնը տաճկահայերին, Դեսպանը յայտնում է՝ որ իւր կարծիքով անժամանակ է ներկայումս Հայկական վիլայէթների գրաւումն, որի մասին երազում են շատ հայեր: Իսկ ինչ վերաբերում է բարենորոգութիւններ մտցնելուն՝ Դեսպանը յիշեցնում է՝ որ 1895 թ. բարենորոգութիւնների ծրագիրը տխուր վախճան ունեցաւ, ուրեմն ներկայումս պէտք է ստեղծել «հաստատուն երաշխիքներ» բարեօրելու հայերի վիճակը և այդ բարելավման խնդիրը ենթարկել ռուսական կամ եւրոպական գործակալների իրական կոնտրոլին:

№ 2.

Երկրորդը Արտաքին Գործոց Նախարար Սազանովի

նամակն է Կ. Պօլսի Ռուսաց Դեսպան Գիրսին՝

Գրուած 30 նոյեմբերի 1912 թ.

Այստեղ Նախարարը յայտնում է Դեսպանին՝ որ ամենայն Հայոց Կաթողիկոսն դիմել է Ռուսական Կայսերական Կառավարութեան յարուցանելով միջնորդութիւն՝ ցոյց տալու հովանաւորութիւն Տաճկաստանում ապրող հայերին և թիթեացնելու նոցա վիճակը:

Նախարարը Պետրոզրադի Տաճկաց Դեսպանի հետ խօսակցութիւն ունենալիս՝ սորա ուշադրութիւնն է դարձնում Տաճկաստանի հայերի ծանր կացութեան մասին, որ նոքա վերստին ենթարկուած են քրդերի հալածանքներին և թալանին, որ հայերը չունեն ոչ կեանքի և ոչ գոյքի ապահովութիւն, որոնք ծագում են տեղական վարչական մարմինների անկազմակերպ վիճակից: Նախարարը միաժամանակ յայտնում է, որ ինքը մօտիկ անցեալում Տաճկաստանի ներկայացուցչին բարեկամարար մատնանշել է այն կարևոր հանգամանքը, որ պէտք է լուրջ կերպով դրադուել Տաճկա-Հայաստանում մտցնելիք բարենորոգութիւնների հարցով: Ապա յանձնարարում է Դեսպանին՝ որ վերջինս առաջին հնարաւորութեան դէպքում Տաճկաց Արտաքին Գործոց Նախարարի հետ խօսի այդ մտքով, հասկացնելով՝ որ անհոգութեամբ և արհամարհանքով վերաբերուելով դէպի քրիստոնեայ հպատակների օրինական շահերը՝ երկար տարիներ Տաճկաստանի համար ծառայել է մշտական ներքին խռովութիւնների և եւրոպական գաւառներում էլ բարդութիւնների աղբիւր և վերջ ի վերջոյ առաջ բերել Բալկանեան դժբախտ պատերազմը իւր բոլոր հետևանքներով: Եւ եթէ շուտով Տաճկա-Հայաստանում բարենորոգութիւններ մտցնելու խնդիրը լուրջ քննութեան առարկայ չի դառնալ, այդ դէպքում Տաճկաց կառավարութեան առաջ կը ծառանայ Հայկական հարցը այնպիսի սուր կերպով, որ կարող է առաջ բերել նաև Եւրոպական Պետութեանց միջամտութիւնը: Միւս կողմից ներքին խռովութիւնները, որոնք առաջ գալով Ռուսաստանի սահմանին կից Տաճկաց գաւառներում, կարող են փնասակար լինել և ռուսական շահերին՝ բնականաբար և առաջ կը բերեն Ռուսաստանի և Տաճկաստանի մէջ լարուած յարաբերութիւն: Նախարարը յայտնում է նաև, որ Բալկանեան պատերազմից յետոյ Տաճկաց կառավարութիւնն զաղթականներ է բերում դէպի հայերի վիլայէթները և դրանով աւելի վատացնում նոցա վիճակը և այդ բանը կարող է առաջ բերել աւելի լարուած յարաբերութիւն հայերի, եթէ կառավարութիւնը ձեռք չառնի միջոցներ և մահմեդական գաղթականների հոսանքը չհեռացնի քրիստոնեայ ժողովրդով բնակեցրած տեղերից այլ տեղեր, ինչպէս օրինակ Միջագետքը, որտեղ կան աւելի ազատ հողեր: Յանձնարարում է Դեսպանին այս բոլոր խնդիրների շուրջը խօսել Տաճկաց Արտաքին Գործոց Նախարարի հետ: յիշեցնելով՝ որ Տաճկաստանը ներկայումս դառնալով առաւելապէս Փոքր-Ասիական կառավարութիւն՝ պէտք է առանձնապէս հոգ տանի իրենց յարաբերութիւնը Ռուսական կառավարութեան հետ պահպանել աւելի փափուկ, հեռացնելով այն բոլոր առիթները, որոնք կարող են երկու Պետութեանց մէջ առաջ բերել ընդհարումներ:

№ 3.

Երրորդը Դեսպան Գիրսի հեռագիրն է Արտաքին Գործոց  
Նախարար Սազանովին՝

Ուղղուած 1912 թ. 4 դեկտ. 4 Պօլսից:

Դեսպանը յայտնում է՝ որ ինքը մասնաւոր կերպով խօսեց  
Արտաքին Գործոց Նախարարի հետ Հայկական վիլայէթներում  
գոյութիւն ունեցող սոսկալի կացութեան մասին և հասկացրեց  
նոյնպէս Գարլիէլ էֆենդուն (Նորատունկեան), որ նոր բարդու-  
թիւններից խուսափելու համար պէտք է մասնեղական զաղթա-  
կաններին պատերազմի բեմից չուղարկել Հայաստան: Արտաքին  
Գործոց Նախարարը ուշադրութեամբ լսելով՝ խնդրում է Դեսպա-  
նից, որ սորա յայտարարութիւնը համարուի պաշտօնական, որ-  
պէսզի՝ Տաճկաց Նախարարական Խորհրդում կարողանայ այդ մա-  
սին խօսել՝ յենուելով Դեսպանի ասածների վրայ: Դեսպանը թոյլ  
է տալիս:

№ 4.

Կ. Պօլսի Ռուսաց Դեսպան Գիրսի հեռագիրը Արտաքին  
Գործոց Նախարար Սազանովին:

Կ. Պօլսի, 11/24 դեկտ. 1912 թ.

Դեսպանը յայտնում է Նախարարին, որ Տաճիկ կառավարու-  
թիւնը, ի նկատի առնելով, որ հայերը կարող են ղիմումներ անել  
օտար պետութեանց, ձեռնարկել է Հայաստանի համար մշակել  
բարենորոգումների ծրագիր, որի համար կազմել է առանձին  
Յանձնաժողով. որին մասնակցում են, կառավարութեան հրաւի-  
րանօք, մի քանի հայեր: Սակայն կառավարութեան այդ ծրագի-  
րը համարուում է հայերի համար ամենահամեստ պահանջներին  
բաւականութիւն տալուց շատ հեռու: Այդ տեսակէտից տաճկա-  
կան որոշ լրագիրները յարձակւում են հայերի վրայ և սպառնա-  
լիքներ կարդում: Փարիզի և Լոնդոնի հայկական կոմիտեաները  
մտադիր են ղիմումներ անել իրենց տեղական կառավարութիւն-  
ներին, ըստ որում նոքա պէտք է խնդրեն կամ երեք Պետութեանց  
համերաշխ պաշտպանութիւնը և կամ յանձնարարել Ռուսաց կա-  
ռավարութեան միայնակ վարելու հայկական գործերը: Հայերը  
հաստատում են՝ որ Կովկասում ևս կազմւում է առանձին պատ-  
գամաւորութիւն ուղարկելու Եւրոպա: Որպէսզի գործի նախաձեռ-  
նութիւնը մնայ Ռուսաց կառավարութեան՝ Դեսպանը խորհուրդ է

տալիս Նախարարին անյապաղ պատասխան տալ հայերի դիմումներին: Իւր կողմից Դեսպանը յայտնել է հայերին խորհրդարար՝ թէ ինչ խօսակցութիւն է ունեցել Տաճիկ Կառավարութեան հետ հայկական խնդիրների մասին՝ և յայտնել է՝ որ պահանջել է Տաճիկ Կառավարութիւնից տաճիկ զաղթականներ չտեղափոխել Հայաստան Բուժելիայի կողմերից:

### № 5.

Արտաքին գործոց Նախարար Սազանովի խորհրդարար գրած նամակը Անգլիայի և Ֆրանսիայի Ռուսաց Դեսպաններին:

Պետրոգրադ 13 դեկտ. 1912 թ.

Նախարարը յայտնում է Դեսպաններին՝ որ վերջին ժամանակները ամեն կողմից հայերի զանազան հոգևոր և աշխարհական ներկայացուցիչները դիմումներ են անում Ռուսաց Կայսերական Կառավարութեան՝ խնդրելով Ռուսաստանի պաշտպանութիւնը Փոքր Ասիայում ապրող հայերի համար և մինչև անգամ խընդրում են հայաբնակ գաւառների գրաւումն Ռուսաստանի կողմից:

Այդ հարցը ներկայումս լուրջ կերպով զբաղեցնում է Ռուսաց Կայսերական Կառավարութեան՝ որի համար և վերջինս մի քանի անգամ Բ. Դրան ուշադրութիւնն է դարձրել ձեռք առնելու միջոցներ, որոնցով հնարաւոր լինի մօտիկ ապագայում ծագելիք բարդութիւնների առաջն առնել:

Բայց միւս կողմից չէ կարելի չընդունել և հայերի այն յայտարարութիւնը՝ որ ոչ մի յոյս չունեն Տաճիկ կառավարութեան վրայ, որ կարող կըլինի ձեռնարկել բարենորոգումներ մտցնել Հայաստանում, և, իրօք, շատ անգամ է արդարացել հայերի այս յոռետես վերաբերմունքը դէպի Տաճիկ կառավարութիւնը:

Ապա Նախարարը յանձնարարում է Դեսպաններին՝ որ անյապաղ մտքերի փոխանակութիւն ունենան Լօնդոնի և Փարիզի կարիներտների հետ ծրագրելու ընդհանուր սկզբունքներ գործելու միահամուռ գործակցութեամբ յօգուտ հայկական հարցի: Միաժամանակ յանձնարարում է՝ որ նոքա խօսեն համապատասխան կառավարութեանց հետ՝ թէ արդեօք հնարաւոր չէ իրենք ևս յանձնարարեն իրենց Կ. Պօլսի Դեսպաններին պաշտպանելու Ռուսաց Կառավարութեան Բ. Դրան արած դիմումները՝ Եւրոպական Տաճիկաստանից չտեղափոխել տաճիկ զաղթականներ դէպի Փոքր Ասիա, և այսպիսով առաջն առնին այդ ոչ ցանկալի զաղթականական գործի:

№ 6.

Կ. Պօլսի Դեսպան Գիրսը հեռագրում է Արտաքին  
Գործոց Նախարար Սազանովին:

15/28 դեկտ. 1812 թ.

Դեսպանը հեռագրով յայտնում է Նախարարին՝ թէ Բ. Դուռը  
երկիւղ կրելով Հայկական հարցի յարուցման առթիւ՝ արդէն ինքը  
զբաղւում է Հայաստանում մտցնելիք բարենորոգութիւնների  
հարցով: Ըստ երևոյթին որոշել են Հայկական վեց վիլայէթներից  
կազմել երկու տեսչութիւն, իւրաքանչիւրը գլխաւորութեամբ  
տաճկաց ընդհանուր վերատեսչի, և առանձին յանձնաժողով, բաղ-  
կացած երկու մահմեդականից, երկու հայից և երկու օտարազգի-  
ներից, նախագահութեամբ երրորդ օտարազգիի: Այդ ծրագիրը  
բոլորովին չէ գոհացնում հայերին, որոնք պահանջում են եւրո-  
պական կոնարով և ոչ թէ տաճկական աստիճանաւորներ եւրոպա-  
ցիներից:

№ 7.

Կ. Պօլսի Դեսպան Գիրսի հեռագիրը Արտաքին  
Նախարար Սազանովին

14 դեկտ. 1912 թ.

Դեսպանը Կ. Պօլսում բժիշկ Չաւրեանից ստանալով դժբախտ  
հայերի դրութեան մասին թաւմ ցաւալի տեղեկութիւններ՝ հա-  
ղորդում է Նախարարին. որ Հայաստանում միանգամայն չկայ  
հայերի կեանքի և գոյքի ապահովութիւն, Տաճիկ կառավարու-  
թիւնը առանձին պաշտպանութիւն է ցոյց տալիս քրդերին և մի-  
անգամայն անպատիժ թողնում նրանց, և, յայտնում է Դեսպանը՝  
Չաւրեանի կարծիքով միայն Ռուսաստանը կարող կը լինի հայ  
կեանքի այդ վէրքերը բուժել, կամ անմիջապէս և կամ ճնշումն  
գործ դնելով Տաճկաց կառավարութեան վրայ:

«Չաւրեանի խօսքերով՝ ամենամօտիկ ապագայում չէ նա-  
խատեսւում հայերի մասսայական կոտորած: Բայց նա հաստա-  
տում է հայերի՝ քրդերի ձեռքով կատարուած մի քանի յաճախակի  
կրկնուող սպանութիւնների դէպքեր, իսկ նախկին տարիների  
փորձը ցոյց է տալիս, որ այդպիսի յաճախակի կրկնութիւնը հետ-  
զհետէ զարգանում է, և վերջ ի վերջոյ դառնում է ջարդեր և կո-  
տորածներ: Միւս կողմից իւրաքանչիւր օր հողային հարցը սուր  
կերպարանք է ստանում, մանաւանդ որ հէնց իրենք տաճիկ իշ-  
խանութիւնները առանց քաշուելու խրախուսում են քրդերին՝

յափշտակելու հայերի հողերը, երբեմն հարկադրելով հայերին ստորագրելով այնպիսի արձանագրութիւնների ներքոյ, որով իրենց հողերը հաստատում են յափշտակողների անունով:

Զաւրեանը ունի այն կարծիքը, որ տաճիկ իշխանութիւններից է լիակատար կելպով կախուած թոյլ շտալ ջարդեր և կոտորածներ և եթէ Ռուսաց Առաւմարութեան կողմից եռանդուն նախազգուշացումներ լինին՝ հնարաւոր է կանգնեցնել ահռելի պատահարները, Միջնորդելով այդպիսի պաշտպանութեան համար՝ պ. Զաւրեանը միևնոյն ժամանակ խնդրեց իմ կարծիքը՝ թէ արդեօք ինչպէս պէտք է հայ ազգաբնակչութիւններն իրենց պահեն Տաճիկ կառավարութեան նկատմամբ և արդեօք պէտք է որ հայերը կոչ անեն Ռուսաստանին և միւս Եւրոպական Պետութիւններին:

Ես պատասխանեցի իմ խօսակցին՝ որ կայսերական Կառավարութիւնը ցոյց է տալիս կենդանի մասնակցութիւն Հայաստանի գործում: Բայց յամենայն դէպս հայերը չպէտք է մոռացութեան տան ներկայ ըսպէի բացառիկ հանգամանքները և վատացնեն իրենց զրութիւնը որ և է անզգոյշ քայլով: Անհրաժեշտ է՝ որպէսզի ամբողջ Եւրոպայի աչքում հայերը համարուեն զո՛ւ տաճիկական կամայականութեանց, և ոչ թէ դառնան քաղաքական յեղափոխականներ, ցանկանալով օգտուել տաճկաց զինուորական անյաջողութիւններից՝ իրականացնելու իրենց ազգային ձգտումները: Գորա համար և հայերը չպէտք է զրգոն տաճիկներին, առաւել ևս ապստամբուին չպէտք է նոքա նոյնպէս դիմեն Եւրոպային որ և է քաղաքական պահանջներով: Սակայն միւս կողմից հայերը իրաւունք ունեն թէ մամուլում և թէ իրենց կոչերում ընդհանուր ուշադրութիւն հրաւիրել այն ազադակող ճնշումների համար, որոնց նոքա ենթարկում են քրդերի և տաճկաց իշխանութիւնների կողմից:

Բժիշկ Զաւրեանն ինձ յայտնեց, որ իմ այդ խօսքերը նա ընդունում է առաջնորդուելու և այդ մտքով ազդելու իւր կուսակցական ընկերների վրայ և առհասարակ զաղափարակիցների վրայ: Վերջում, իբրև եզրակացութիւն, նա արտայայտեց «հայերի այն ընդհանուր միտքը», որ նոցա վիճակը գտնուում է Ռուսաստանի ձեռքում:—

Երէկ ես ունեցել եմ դէպք բացատրուել Արտաքին Գործոց Նախարարի հետ: Ես մատնացոյց արի Գարբիէլ Էֆէնդուն՝ սկզբում մասնաւոր կերպով, հայկական վիլայէթներում գոյութիւն ունեցող վտանգաւոր զրութեան վրայ և Սասունի կամ Աղանայի դէպքերի կրկնութեան անթոյլատրելի լինելու վրայ: Ես հաւասար կերպով արտայայտեցի, որ խորհուրդ եմ տալիս, նոր բարդութիւններից խուսափելու համար, թէ հողային և թէ կրօնական

հարցում, մահմեդական դադթականներ չտեղափոխել Հայաստան և Երուսաղեմի Տաճկաստանից:—

Գարբրիէլ Էֆէնդին իմ յայտարարութիւնն ընդունեց համա- կրանքով և մինչև անգամ ասաց, որ ինքը կըզերադասէր այդ խօսքերը լսած լինել պաշտօնապէս: Այդ տեսակէտից ես թոյլ տուի պ. Նորատունկեանին իմ ասածների մասին զեկուցանի Նախարարական Խորհրդին»:

(Ստորագր. ԳԻՐՍ)

№ 8.

Տաճկաստանի Դեսպանը Արտաքին Գործոց Նախարարին  
Կ. Պոլիս 17 դեկտ. 1912 թ.

(խորհրդարար նամակ)

Հայկական հարցը շարունակում է խիստ կերպով անհան- գատացնել Բ. Դրան: Ինչպէս ես արգէն պատիւ եմ ունեցել հազոր- գել Չերդ բարձր գերագանցութեան սոյն դեկտ. 15-ին հեռագրով, կառավարութիւնը մշակել է շուտափոյթ բարենորոգումների ծրա- գիր հայկական գաւառների համար և յանձնել է ի քննութիւն առանձին յանձնաժողովի, նախագահութեամբ Մեծ Վեզիրի և ան- դամակցութեամբ նախարարներ՝ Արտաքին գործոց, Լուսաւորու- թեան, Ներքին գործոց և Ֆինանսների:

Կառավարչական օրէնսգծի բնագիրը ներկայացրուած չէ եղել Պատրիարքարան: Ներքին գործոց նախարարը միայն ընդհանուր ձևով ծանօթացրել է օրէնսգծին Սառն Խորհրդի երկու անդամին, որից յետոյ հարցրել է նոցա կարծիքը: Իսկ միւս օրը (դեկտմ. 8-ին) յանձնաժողովին մասնակցելու համար հրաւիրուած էին մի քանի հայկական գործիչներ, որոնք Պատրիարքարանում առանձին պաշտօնական գիրք չունէին:

Կառավարչական օրէնսգիծը, որ յանձնաժողովին էր յանձ- նուած և որի համառօտ տեսութիւնը սորա հետ կցւում է, աչքի է ընկնում թերութեամբ և իւր որոշումների ընդմիջումներով, և պէտք է համարել մի քայլով աւելի յետ համեմատութեամբ 1895 թ. 20 հոկտ. օրէնքի, մշակուած Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի նախաձեռնութեամբ: Ինչպէս 1895 թ. օրէնքը, նոյնպէս և յիշեալ օրէնսգիծը հաստատում է հայկական գաւառների համար Ընդհանուր Վերատեսչի պաշտօնը, սորան ենթարկելով վայրերը: Բայց այն ժամանակ 1895 թ. օրէնքի 32 յօդուածով Բ. Դրան կից ստեղծում է մշտական կոնտրոլի յանձնաժողով, ճանաչելով՝ որ Դեսպաններն շատ կարեւոր իրաւունքներ ունեն յարարերու- թեան մէջ մտնելու այդ հաստատութեան հետ, սակայն ներկայ

օրէնսգիծը այդպիսի կոնտրոլի իրաւունք ունեցող յանձնաժողովի մասին լռում է: Նորա փոխարէն կազմում է առանձին յանձնաժողով կից Ընդհանուր Վերատեսչի, բաղկացած 3 մահմեդականից և 3 քրիստոնեայից. այդ յանձնաժողովին նախագահում է Ընդհանուր Վերատեսչի խորհրդականը, որն է օտարազգի՝ և միաժամանակ Տաճկաց պետական ծառայութեան մէջ: Նոր նախագիծը լռութեան է տալիս վարչական մարմնի և ինքնավարութեան մէջ քրիստոնեաների մասնակցութեան խնդիրը՝ որը 1895 թ. օրէնքի մէջ յատկապէս յիշատակուած է: Միւս հարցերը շօշափուած են Ընդհանուր կէտերով: Վերջապէս այդ նոր ծրագրով ենթադրուում է բարենորոգութիւնները տարածել ոչ թէ բոլոր հայկական գաւառներում, այլ միայն չորսի մէջ (Սիվազի և Էրզրումի գաւառները դուրս հանելով):

Յանձնաժողովի մէջ մասնակցելու համար հրաւիրուած հայ գործիչները չեն զլացել պարզելու կառավարչական ենթադրութիւնների ամբողջ անկարելիութիւնը: Նոքա մատնանշել են կարևորութիւնը տարածելու բարենորոգումները վեց վիլայէթներում, այլ և ցանկալի են համարել հրաւիրել օտարազգիներին դատաստանական տեսուչների, ոստիկանական և ժանդարմերիական սպաների պաշտօններով, անհրաժեշտ են համարել դատարաններում իբրև խօսակցական լեզու հաւասար տեղ բռնեն հայոց և տաճկաց լեզուները, այլ և համարել են անյետաձգելի վճռելու հողային հարցը: Հայերը խորհուրդ են տալիս Բ. Դրան բարենորոգումները մշակելիս առաջնորդուեն 1895 թ, օրէնքով, Միւրցշտեկսկի ծրագրով և վիլայէթների համար կազմած 1880 թ. օրէնքով, ըստ որում մատնացոյց էին անում ցրելու այն թերահաւատ վերաբերմունքը, որ հայ ժողովուրդը տածում է դէպի տաճկական խոստումները: Վերջում, իբրև եզրակացութիւն, հայերը յայտնել են՝ որ իրենց գործը յանձնաժողովում համարում են վերջացած, իսկ Դրանը խորհուրդ են տալիս դիմել Պատրիարքարանին:

Ինձ հասած լուրերից տեղեկացայ, որ վերջին յայտարարութիւնը արուած է Պատրիարքարանի ճնշման ներքոյ, խորապէս վշտացած լինելով, որ Դուռը դիմել է ոչ լիազօր անձանց:

Յանձնաժողովի հայերի հետ ունեցած խորհրդակցութիւնից մի քանի օր յետոյ տեղական մամուլում սկսեցին երևան գալ տեղեկութիւններ կառավարչական օրէնսգիծը փոփոխութեան ենթարկելու մասին հայերի արտայայտած ցանկութեան մտքով: Իբրև թէ կառավարութիւնը համաձայնուել է վեց վիլայէթներից կազմակերպել երկու վարչութիւն, իւրաքանչիւրի գլուխը ընդունելով երկու տաճկական Ընդհանուր-Վերատեսուչ: Յանձնաժողովներն այդ երկու Ընդհանուր Վերատեսուչների գլխաւորութեամբ

պէտք է բաղկանան իւրաքանչիւրը երկու հայից, երկու տաճկից և երկու օտարազգիից, երկու Յանձնաժողովներումն էլ նախագահում են Ընդհանուր—Վերատեսուչների օտարազգի Սորհրդականները:

Տաճիկ կառավարութեան այդպիսի ենթադրութիւնները, որ ցանկանում են ակնյայտնի կերպով բարենորոգումների օտարազգի կոնտրոլը փոխարինել հրաւիրելով օտարազգիներին տաճկաց ծառայութեան մէջ՝ իմ ունեցած տեղեկութիւններից երևում է՝ որ բոլորովին չեն գոհացնում Պատրիարքարանին և նորան կից շրջանները: Այս կամ այն ձևով ստանալով ռուսակոսն կամ միջազգային ապահովութիւն այդ շրջաններում համարում է հայերի առաջին և ամենակարևոր պահանջը, որոնց առաջ տեղի են տալիս և երկրորդական տեղը բնում բարենորոգումների բովանդակութեան և բնաւորութեան ապահովութիւնը: Ապահովութիւններից ամենից իրական ձևը համարում է ռուսական գրաւումն: Այդ ցանկութիւնները մօտիկ ապագայում իրականացնելու անկարելիութեան դէպքում առաջ է գալիս վեց վիլայէթների համար Բարձրագոյն կոմմիսսարի պաշտօնի հաստատման ծրագիրը, որին Նշանակում է Սուլթանը Պետութեանց համաձայնութեամբ, այդ Բարձրագոյն կոմմիսսարը պէտք է անպատճառ լինի օտարազգի:

Հայոց Պատրիարքարանի խառն ժողովը երեկ քննութեան է առել հարցը, թէ ինչպէս վերաբերուել Դրան բերանացի յայտարարութեան բարենորոգումների մասին: Սորհուրդը վճռեց Դրան ուղարկել թագրիւ հետեւեալ բովանդակութեամբ: Պատրիարքարանը հաստատում է, որ Դուռը բարենորոգումների ծրագիրը հաղորդել է ոչ թէ իրեն, այլ մասնաւոր անձանց, այդ հիման վրայ և Պատրիարքարանը հնարաւորութիւնից զուրկ է այդ ծրագրի բովանդակութեան մասին կարծիք յայտնելու: Պատրիարքարանին նոյնպէս անյայտ է, թէ ինչ կերպով Դուռը մտածում է ապահովել բարենորոգումների կատարումն: Պատրիարքարանը վերջին խօսքերով ակնարկում է օտարազգի կոնտրոլի անհրաժեշտութիւնը: Թագրիւրը դեկտ. 15-ին ուղարկուած է Դրան: Եթէ կառավարութիւնը յայտնի Պատրիարքարանին օրէնսգծի բնագիրը, այն ժամանակ վերջինս չի խուսափիլ կարծիք յայտնելու:

### Յաւելուած № 8-ի.

Հայկական բարենորոգումների ծրագիրը: Ահա օրէնքի նախագծի զանազան յօդուածների եզրակացութիւնը, որ պէտք է տրուի ժամանակաւոր գործադրութեան համար, նախ քան պարլամենտական հաւանութիւն գտնելը:

Յօդ. 1. Այն օրէնքները՝ որոնք որոշում են աստիճանաւոր-

ների յարարերութիւնը, ինչպէս և վարչական, տնտեսական իրաւարանական, զինուորական, նաև ամբողջ Կայսրութեան մէջ գործող Շարիաթի օրէնքները, մնում են իրենց ոյժի մէջ նաև յիշեալ հրեք վիլայէթներում:

Յօդ. 2. Առանձին Յանձնաժողով և Ընդհանուր Վերատեսուչ նշանակւում են և յիշեալ վիլայէթներում:

Յօդ. 3. Յանձնաժողովը բաղկանում է հրեք մահմեդականներից, ևրկու հայերից և մէկ խալիֆացուց: Յանձնաժողովի անդամները ընտրւում են այն անձանց միջից, որոնք ունին կարևոր յատկութիւններ և ընդունակութիւններ, և հաւատ են ներշնչում:

Յանձնաժողովում նախագահում է Ընդհանուր Վերատեսչի Սորհրդականը:

Յօդ. 4. Սորհրդականը կրինի օտարազգի, ծանօթ վարչական գործերին և երկրի սովորոյթներին և անհրաժեշտ յատկութիւնների տէր: Նա կըհաշուի Օսմանեան Կառավարութեան ծառայութեան մէջ:

Յօդ. 5. Ընդհանուր Վերատեսուչը նշանակւում է Կայսերական Կառավարութեան կողմից վեց ամիս ժամանակով, և չէ կարելի նրան փոխարինել՝ բացառութեամբ այն դէպքերի, երբ նա կըձանաչուի յանցաւոր այնպիսի գործերում, որոնց մէջ նա ենթարկւում է պատասխանատուութեան:

Յօդ. 6. Յանձնաժողովի անդամները կարող են արձակուել բացառապէս ոչ օրինական գործողութեանց համար, և այն էլ նախագահի և յանձնաժողովի անդամների մեծամասնութեան կայացրած վճռի հիման վրայ:

Յօդ. 7. Ընդհանուր Վերատեսչի բոլոր գործողութիւնները ի կատար են ածւում յանձնաժողովի վճիռների հիման վրայ: Ընդհանուր վերատեսուչը լիազօրուած է կատարել Յանձնաժողովի վճիռները և տալ համապատասխան կարևոր հրահանգներ վալիներին:

Յօդ. 8. Ընդհանուր Վերատեսուչը իրաւունք ունի տեղափոխել վիլայէթի աստիճանաւորներին բացառութեամբ այն անձանց, որոնք ծառայում են հողերը վարչութեան մէջ (Շարիաթ), իսկ սրանց համար նա պէտք է դիմէ Շէյխու-լ-խալամի վարչութեան, նոյնպէս և բացառութեամբ այն անձանց, որոնք նշանակւում են Բարձրագոյն Իրադէտով, սրանց համար էլ պէտք է դիմէ Ներքին Գործոց Նախարարին, և այն էլ Յանձնաժողովի վճռի հիման վրայ:

Յօդ. 9. Ընդհանուր Վերատեսուչները և Յանձնաժողովը

պէտք է կատարեն վերահսկողութեան ճանապարհորդութիւններ:

Յօդ. 10. Վերատեսուչը անձամբ, նոյնպէս և Յանձնաժողովի իւրաքանչիւր անգամբ, կարևորութեան դէպքում և Յանձնաժողովի վճռի համաձայն կարող են կատարել վերահսկողութեան ճանապարհորդութիւններ:

Յօդ. 11. Յանձնաժողովի պարապմունքի առարկաներն կազմում են.

Վճիռ կայացնել յանուն արդարութեան քրդերի և հայերի մէջ ծագած հողային վէճերի համար:

Երկու տարրերի մէջ ծագող վէճերի առիթը հեռացնել և նրանց մէջ վերականգնել լիակատար համաձայնութիւն:

Ապահովել կարգերը, լիակատար հաւասարութիւն վերականգնել, վերակազմել ժանդարմերիան, անցկացնել ճանապարհներ և հաղորդակցութիւնները դիւրացնել, բարելաւել գիւղական տնտեսութիւնը և արհեստները, ձեռնարկել միջոցներ օգտագործելու երկրի բնական հարստութիւնները և այլն:

Յօդ. 12. Վալին, զինուորական բերդապետը, ոստիկանները և ժանդարմերիան պէտք է կատարեն Ընդհանուր Վերատեսչի հրամանները:

Յօդ. 14. Մէարիֆի և մենաֆի լրացուցիչ վճարները, ինչպէս և վիլայէթի եկամուտները պէտք է գործադրուեն յօգուտ լուսաւորութեան գործի, հասարակական աշխատանքների և վիլայէթի գիւղական տնտեսութեան, համաձայն առանձին նախահաշուի:

Յօդ. 15. (չկայ նշանակուած):

Յօդ. 16 Այդ գաւառներում կարգ ու կանոն մտցնելիս, որպէսզի ուրիշ վիլայէթների կարգ ու կանոնների մակերևոյթին հասնի, ընդհանուր վարչական օրէնքները ոյժ են ստանում նաև այդ չորս գաւառներում:

Յօդ. 17. Վերատեսուչը և Յանձնաժողովի անդամները նշանակուած են 5 տարով. այդ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ կարելի է վերստին նորոգել: Ընդհանուր վերատեսչին ոտճիկ կաբելի է տալ 20,000 պիաստր, Յանձնաժողովի անդամներին 10,000 պիաստր, իսկ խորհրդականներին . . . . (բաց թողած):

## № 9.

Բայազիտի փոխ հիւպատոսը Արտաքին  
Գործոց նախարարին.

Բայազիտ 20 դեկտ. 1912 թ.

(Հ ե ո ա գ ի ր)

Քրդերի մէջ նկատուում է շարժումն, որ առաջ է եկել Հայաստանի մէջ ապագայ մտցնելիք բարենորոգումների լուրերով: Այստեղ ապրող աշիրէթի պիխաւոր Ջալալ ուսատեաց Շէյխ Իբրահիմ հրամայել է իւր քրդերին պատրաստուել կոտորելու հայերին, և սկսել այն ժամանակ, երբ բարենորոգումների խնդիրը կը կարգադրուի: Հայերը իրարանցումի մէջ են:

(Ստորագր.) ԱԿԻՄՈՎ.

## № 10.

Փրանսիայի Ռուսական Դեսպանը Արտաքին  
Գործոց նախարարին.

Փարիզ 24 դեկտ. 1912 թ. (6 յունվ. 1913 թ.)

(Հ ե ո ա գ ի ր)

Պ. Պուանկարէն ինձ ասաց, որ լիակատար կերպով համաձայն է հայկական հարցի վերաբերեալ Ձեր ունեցած հայեցակէտին և համապատասխան հրահանգութիւններ ուղարկեց Ռուսաստանի և Տաճկաստանի իրենց Դեսպաններին:

(Ստորագր.) ԻԶՎՕԼՍԿԻ.

## № 11.

Տաճկաստանի Ռուսական Դեսպանը Արտաքին  
Գործոց նախարարին.

Կ. Պօլիս, 27 դեկտ. 1912 թ.

(Հ ե ո ա գ ի ր)

Դեկտեմբերի 21-ին կայացել է Հայոց Ազգային ժողովի նշանակալից նիստը, որով վերականգնուել է հայկական կուսակցութիւնների լիակատար համերաշխ գործունէութիւն բարենորոգումների հարցում:

Սառն խորհուրդը հայերը հրաւիրել էին արտայայտելու իրենց կարծիքը «Կառավարութեան նախագծի բոլորովին անգոհացուցիչ» լինելու առթիւ և հաղորդել, թէ ինչ քայլեր է խորհում ժողովը ձեռնարկել ապահովելու բարենորոգումները մտցնել և կարգը վերականգնել Հայաստանում:

Պատասխանելով այդ հարցապնդումին, Սառն Սորհուրդը յիշեցրել է, որ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցը ձգձգում է արդէն կէս դար. մի քանի անգամ կազմել են բարենորոգումների նախագիծ, որոնք անփոփոխ մնացել են անշարժ: Բայց այս անգամ Սորհուրդը չբաւականանալով նախագծերով՝ ամեն ջանք գործ է դնում, որպէսզի բարենորոգումների գործադրութիւնը անպայման ընդմիշտ ապահովուի, որպէսզի ոչ մի նախարարութիւն և ոչ մի իշխանութիւն, ոչ մի ժամանակ և ոչ մի ճանապարհով չկարողանան մինչև անգամ ժամանակաւոր կերպով կանգնեցնել բարենորոգումների խնդիրը: Ուստի և խառն խորհուրդը պահանջում է իւր ծրագրին ներշնչել հաւատ, որ կարտայայտուի հետեւեալ կէտերով:

I. Սառն Սորհուրդը Պատրիարքարանի կըշարունակի իւր յարաբերութիւնները Տաճկաց Կառավարութեան հետ, պաշտպանելով իւր հայեացքները:

II. Սորհուրդը կըձգտի լուրջ գրաւականներով ձեռք բերել ապահովութիւն անփոփոխ գործադրութեան տալու կենսական և ուշադիր կերպով մտածուած բարենորոգումները:

Սառն Սորհրդի յայտարարութիւններն ընդունել են Ազգային Ժողովի անդամները լիակատար համակրութեամբ: Մի քանի պատգամաւորներ ցանկանում էին միայն իմանալ մանրամասնութիւնները բարենորոգումների գրաւականների, որոնց մասին ասել էր Սորհուրդը: Բայց վերջինս ցոյց է տուել հեռաւոր բացատրութեանց անտեղի լինելը, միայն հաղորդելով, որ ի նկատի ունի՝ ազգային իրաւունքները պաշտպանելիս՝ յենուել միջազգային պարտաւորութեանց վրայ, որ վերցրել է իւր վրայ հէնց ինքը Օտոմանեան Կառավարութիւնը: Չափազանց բնորոշ է, որ այդ հայեցակէտը Սորհրդի, անդամների մեծ մասը բաղկացած պահանողականներից, պաշտպանել են նաև դաշնակցականները, որոնք առաջարկել են հրաժարուել ապագայ բանակուիւններից և Սորհրդին յայտնել իրենց լիակատար վստահութիւնը, ըստ որում դաշնակցականները յայտնել են, որ այսպիսի պատմական բողբոջին նոքահրաժարում են իրենց կուսակցական հայեացքներից, մինչև որ ըլլորը կտեսնեն, որ հայ ազգի մօտ բարենորոգումների հարցում կայ մի ձայն: Գորանից յետոյ խնդիրը ստացել է այն հետևանքը, որ Ազգային Ժողովը միաձայն հաւանութիւն է տուել Սառն Սորհրդի որոշումներին:

21 դիկտ. նիստը ներկայանում է լուրջ նախազգուշութիւն Տաճկաց Կառավարութեան համար. թէև ապահովութիւն պահանջող ճառախօսները չէին անուանում «միջազգային», բայց այդ ճառերի նկատմամբ ոչ մի կասկածի չէին ենթարկուում:

Գեկտ. 21-ի նիստը նշանակալից դարձաւ այստեղի հայկական կեանքում նաև մի այլ շատ կարևոր դէպքով: Ազգային ժողովը վերականգնեց նախկին Օրմանեան Պատրիարքի պատիւն և բարի անունը, անհիմն ճանաչելով նորա վրայ բարդուած մեղադրանքները:

Ինչպէս յայտնի է, Օրմանեան Պատրիարքը պէտք է թողնէր գահը տաճկաց սահմանադրութեան առաջի օրերում, զիջելով ազգի ձայնին, որով մեղադրում էին նորան Սուլթան Արզուլ Համիդին հաճոյակատարութիւն անելու մէջ և այլ գործողութիւններում, որոնք հակառակ էին հայոց շահերին:

Օրմանեանի ամենակատար ճակատակորդները եղել են դաշնակցականները: Եւ այժմ նոքա չկամեցան մասնակցել նորա պատիւը վերականգնելու մէջ, բայց միայն վճռել են չխանգարել այդ, յայտարարելով, որ «պատմական ըողէն» պահանջում է ներքին երկպառակութիւնները վերացնել, ուստի և նոքա դորա համար հրաժարուած են քուէարկելուց: Ազգային ժողովը, այդ յայտարարութիւնից յետոյ, 28 ձայնով ընդդէմ 4-ի մերժել է Օրմանեանին վերագրած բոլոր մեղադրանքները և ճանաչել նորան արդար:

Դաշնակցականների այդ տեսակ խաղաղաօրական վերաբերմունքը առիթ է տալիս ենթադրելու, որ նոքա հաշուի են առնում յանձին խելօք և ձիրք ունեցող Օրմանեանի ունենալ նորան ժամանակաւոր կուսակից ընդհանուր ազգային գործում: Յամենայն դէպս կուսակցականների մէջ զոյացել է եթէ ոչ հաշտութիւն, գոնէ ժամանակաւոր խաղաղութիւն:

(Ստորագր.) ԳԻՐԱ.

## № 12.

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքան  
Արտաքին Գործոց Նախարարին.

Թիֆլիս, 7 փետրվ. 1913 թ.

(Ն ա մ ա կ)

Սոյն տարուայ 16 յունվարի № 147 նամակով ամենայն Հայոց Կաթողիկոսը յայտնել է ինձ, որ նա յղել է իւր կողմից նշանակած պատգամաւորութեան նախագահ Պօղոս Նուրար փաշային հրահանգ չդիմել Լօնդոնի ղեսպանների համաժողովին, և առայժմ իւր գործունէութիւնը սահմանափակել կարծիքների և Եւրոպական Պետութիւնների ղեկավարող և ազդեցիկ շրջանների տրամադրութեանց նախապատրաստութեամբ յօգուտ Տաճկաց Հայաստանում Ռուսաստանի կոնտրոլի ներքոյ բարենորոգումներ մտցնելու գործին:

Գորա հետ Գէորգ Կաթուղիկոսը հաղորդել է, որ Կ. Պօլսից և Տաճկա-Հայաստանից շարունակ Ինքը ստանում է հաղորդագրութիւններ, որոնցով տեղեկացնում են, որ շարունակում են հայերի վրայ յարձակումները քրդերի և զինուած խմբերի կողմից, սպանութիւնները և թալանը, մեղաւորներն էլ մնում են անպատիժ օրէնքի և իշխանութեանց կողմից: Բացի դորանից, համաձայն իւր ստացած վերջին տեղեկութեանց, մահմեդական տարրը, ներկայումս Բալկանեան թերակղզուց զաղթելով դէպի Անատոլիան, հետզհետէ բնակութիւն է հաստատում քրիստոնեայ ժողովրդի մէջ, և դորանով աւելի սրում առանց այն էլ սուր կերպարանք ստացած հողային հարցը և թշնամական վերաբերմունքը. տարածուած է յամառ և սարսափեցնող ձայներ քրդերի ինչ որ պատրաստութեան և առաջիկայ գործողութեանց մասին, որ ուղղուած են ընդդէմ Անատոլիայի քրիստոնեայ տարրի—հայերի, այն նպատակով, որ Տաճկաստանի մի քանի նահանգներում ամբացնեն քրդերի հաստատուն տիրապետութիւնը, այդ բանը հաստատուած է մի քանի քրդական ցեղերի շէյխերի ունեցած խորհրդակցութիւններով, հետևանքը ներկայացնելով, Կ. Պօլսի ազդեցիկ քրդերի միջոցով, Բ. Կրան:

Այդ տեսակէտից Գէորգ Կաթուղիկոսը աւելացնում է, որ ինքը և իւր հօտը լիակատար յոյս են տածում, որ Կայսերական Կառավարութիւնը կըտայ անհրաժեշտ հրահանգութիւնները իրենց՝ Տաճկաստանում եղած՝ Դեսպանին և հիւպատոսներին ձեռք առնելու իրական միջոցներ քրդերի և տաճիկների շարագործութիւնների դէմ՝ մինչև որ բարենորոգումները վերջնականապէս կը մուծուեն:

(Ստորագր.) ԿՈՄՍ ՎՕՐՕՆՅՈՎ.—ԳԱՇԿՈՎ:

**Տաճկաստանի Ռուսական Դեսպանը Արտաքին Գործոց Նախարարին.**

Կ. Պօլիս 28 փետրվարի—13 մարտի 1913 թ.

(Հեռագրի)

Իմ ստացած տեղեկութիւնների համաձայն, Գերմանիայում վաճառականական-արդիւնաբերական շրջանները սկսել են վերջին ժամանակներս հետաքրքրուել Հայաստանով: Նորա մէջ տեսնում են գործունէութեան նոր դաշտ գերմանական եռանդի համար և իբրև մի պարսպ հակառակ հիւսիսի ազդեցութեան: Բերլինում, իբր թէ, կարդացել են դատախօսութիւններ, որոնցով կառավարութեան ուշադրութիւնն են հրաւիրել և ցանկալի համարել, որ Գերմանիան իւր վրայ վերցնի Հայաստանում բարենորոգումներ մուծելու հարցի յարուցման նախաձեռնութիւնը:

(Ստորագր.) Գիրս

(Նարունակելի)

Բ. Վ. Ա.